ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Աշոտ Մարտիրոսյան
2. ՀՀ կառավարությանն ենթակա միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահ
3. Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2020 թվականի փետրվարի 18-20-ը
4. Եվրոպական հանձնաժողով
5. Մասնակցել Հայկական ատոմային էլեկտրակայանին տրամադրվող միջազգային աջակցության համակարգման 8-րդ տեխնիկական հանդիպմանը

6. **Քննարկված թեմաները** - Հայկական ատոմային էլեկտրակայանին և ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին տեխնիկական հետագա աջակցության ուղղությունները:

7. Համաձայն Օրակարգի ելույթներ /presentations/ ունեցան Եվրամիության, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության /ԱԷՄԳ/, ԱՄՆ էներգիայի դեպարտամենտի, ՌԴ ԱտոմՍերվիս ընկերության, Չեխիայի և հայկական պատվիրակության ներկայացուցիչները: Ելույթներում ներկայացվեցին մինչ այժմ իրականացված և նախատեսվող աշխատանքները: Եվրամիության ներկայացուցիչ Պասկալ Դորեն /Pascal Daures/ հայտնեց, որ Եվրամիությունը չի աջակցելու Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրերին և առաջարկում է հնարավորինս շուտ դադարեցնել էներգաբլոկի աշխատանքը, իսկ Ստրեսս-թեստի արդյունքների հիման վրա մշակված Ազգային գործողությունների պլանի իրականացմանը կաջակցեն: Ես առաջարկեցի, որպեսզի համակարգման հաջորդ հանդիպմանը հրավիրեն նաև ԱՄՆ միջուկային կարգավորող հանձնաժողովի ներկայացուցչին, որը ընդունվեց մասնակիցների կողմից:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը** – Հանդիպման ժամանակ ընդունվեց որոշում, որ ''դոնորները'' կցուցաբերեն տեխնիկական աջակցություն Հայկական ԱԷԿ-ի շահագործումից հանելու, ռադիոակտիվ թափոնների կառավարման և Ստրեսս-թեստի Ազգային գործողությունների պլանի, վթարային հակազդման հրահանգների մշակմանը

և կշարունակեն աջակցել ԱՄՆ և Եվրամիության ընթացիկ գործող ծրագրերի իրականացմանը:

<< միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին վերոնշյալ ծրագրերի իրականացման լիցենզավորման համար կցուցաբերվի փորձագիտական աջակցություն:

25.02.2020թ.